

Հայտարարություն

Ապահովելով Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի քարոզարշավին մասնակցող ՀՀ Ազգային ժողովի խմբակցությունների /պատգամավորական խմբերի/ համար ոչ խտրական պայմաններ եւ հիմք ընդունելով ՀՀ Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի դրույթները՝ «Արարատ» հեռուստաընկերությունը հրապարակում է 2015թ. դեկտեմբերի 6-ին կայանալիք Հանրաքվեի քարոզչության ժամանակահատվածում տրամադրվող եթերաժամի մասին տեղեկատվությունը:

Քարոզարշավին մասնակցող ՀՀ ԱԺ խմբակցություններին տրամադրվող վճարովի եթերաժամի մեկ րոպեի գինը սահմանվում է 12.600 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

Յուրաքանչյուր խմբակցությանը ամեն օր ժամը 18:00-ից մինչև 20:00 կարող է տրամադրվել առավելագույնը 6 րոպե եթերաժամանակ: Տվյալ օրվա ընթացքում չօգտագործված եթերաժամանակը չի կարող տեղափոխվել մեկ այլ օր:

Արարատ հեռուստաընկերության տնօրեն

Գուրգեն Այվազյան



No/1-19.10.15